Բոլոր եկեղեցիներ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ԿԻՊՐՈՍԻ ՆՈՐԸՆՏԻՐ ԽՐԻՍՈՍՏՈՄՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՀԵՌԱԳՐԵՐ

ՆՈՐԻՆ ԱՄԵՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆ
ԽՐԻՍՈՍՏՈՄՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ ԿԻՊՐՈՍԻ

Նիկոզիա, Կիպրոս

Մեր սիրտը լի հոգևոր հրճվանքով, հանուն հայ առաքելական եկեղեցու ջերմապես շնորհավորում ենք Ձեր ընտրությունն և գահակալությունը, որպես արքեպիսկոպոսի Կիպրոսի պատմական եկեղեցու:

Մաղթում ենք Ձեզ երկար տարիների երջանիկ հովվություն ձեր երկրի և հավատացյալ ժողովրդի համար արդար խաղաղության պայմաններում:

Եղբայրական սիրով ի Քրիստոս՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
18 նոյեմբեր 1977 թ.

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԱԶԳԵՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Ս. Էջմիածին

Խորապես զգացված Մեզ ուղղած Ձերդ Սրբության հղած շնորհավորանքների և մաղթանքների համար՝ Մեր ընտրության և գահակալության առթիվ, որպես Կիպրոսի եկեղեցու պետի, հայտնում ենք Մեր ջերմագին շնորհակալությունները:

Ձեր բարեմաղթությունները մեծապես զորացնում են Մեզ Մեր ստանձնած ծանր առաքելության մեջ:

ԹՐԻՍՈՍՏՈՄՈՍ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԿԻՊՐՈՍԻ

Կիպրոս,
30 նոյեմբեր 1977 թ.

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ՄԽԻԹԱՐ ԱԲԲԱՀՈՐ ԾՆՆԴՅԱՆ 300-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

ՀԱՅՐ ՊՈՂՈՍ ԱՆԱՆՅԱՆԻՆ

Ս. Ղազար, Վենետիկ

Այսօր ուրախությամբ ստացանք Ձեր 24 սեպտեմբեր նամակը: Սուրբ գրական Հայոց աշխարհից և Մայր Աթոռ սուրբ Էջմիածնից ողջո՞ւյն և օրհնությո՞ւն լուսաբնակ Մխիթար աբբահոր նվիրական հիշատակին և ազգանվեր վաստակին: Հայ ժողովրդի վերածննդի հորիզոնի վրա միշտ պայծառորեն պիտի փայլի նաև նրա անմահ գործը: Հավիտենական լույս և խաղաղություն Սեբաստացի Մեծն Մխիթարի հոգվույն:

«Յիշեցէք զառաջնորդս ձեր որ խօսեցան ձեզ զբանն Աստուծոյ»:

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
15 հոկտեմբեր 1977 թ.